մնալու. բայց թէ որ ասոր շոգին կըրակ դարձած յախճապակէ խողովակէ մը անցուի, բոլոր կը լուծուի և ածխացեալ ջրածին[1] ըսուած կազ կը դառնայ. և անկէ զատ կտոր մը իւղային նիւթ ու քիչ մըն ալ ածուխ կը գտնուի խողովակին մէջ։ Եթերը հարիւրամասն ջերմաչափին 31°ին ու 44°ին մէջ կը սառի. շոգի դառնալու ատենը սաստիկ ցրտութիւն կը պատճառէ, և քիչ մը ջրի մէջ քանի մը կաթիլ ասկէց կաթեցընելէդ վերջը թէ որ եղէգով մը փչես, եթերը ջրէն գոլորշիք հանելով շուտով մը զջուրը կը սառեցընէ։ Աերջի ատրճանի դիւրավառ է, և բոցը շատ մուր կը հանէ. շուտ կը տարածուի մթնոլորտին մէջ ու շատ կը բարձրանայ, ու շուտ բռնկելուն համար՝ շատ վտանգաւոր բան է՝ կրակ եղած տեղ եթերը ամանէ աման փոխադրելը։ Պարզ մարմնոց մէջ քիչ մարմին կայ որ եթերին վրայ ազդեցութիւն ընէ, և դըլխաւորը քլորն է։

Իւղային ու խէժային մարմինները լուծելու աղէկ կուգայ եթերը. ուստի արուեստից մէջ շատ կը գործածուի, մանաւանդ առաձգական խէժը լուծելու համար։

Եթերին վրայ աս համառօտ տեղեկութիւնը տալէն ետքը՝ հարկ կը համարինք հոս պզտիկ խորհրդածութիւն մըն ալ աւելցընել իրեն հրաշալի զօրութեանը վրայ որ առաջ յիշեցինք, և որուն համար այնչափ գըրուածքներ ու գովեստներ ելան Եւրոպայի ամէն կողմերը աս վեց ամսուանս մէջ։ Նոր նոր գիւտերը ամէն ատեն մարդկային գիտութեանց ու արուեստից ծաղկելուն նշան ու պատճառ եղած են. և աս բանս այնչափ ճշմարիտ է որ եթէ անհնչմէ ոմանք դէշի գործածուելով՝ օգուտին տեղը վնաս ալ պատճառեն, յանցանքը ոչ գիւտինն է և ոչ գիւտը հնարողին, այլ չարաչար գործածողին։ Ասոր համար ահա եթերին թմրեցընող զօրութիւնը վիրաբուժութեան մէջ բանեցընել սկսող Ճաքսոն ամերիկացւոյն անունն ալ պէտք է որ իր պայծառութիւնը ոչ երբեք կորսնցընէ. թէպէտ և նոյն եթերը ոմանք չարաչար գործածելով տեղ տեղ, ինչուան հիւանդներուն մահուանը պատճառ եղան աս մօտերս։ Ամէն տէրութեանց մէջ ալ զգուշաւոր օրէնքներ ու կանոններ դրուեցան որ ամէն մարդ չըկարենայ ուզածին պէս եթերը բանեցընել, հապա քաջ բժիշկները միայն հրաման ունենան չափով ու խոհեմութեամբ գործածելու. բայց տէրութիւններէն աւելի ալ բժիշկներուն պարտքն է արթուն և զգուշաւոր ըլլալ նաև աս դեղիս գործածութեանը մէջ, աղէկ դիտելով հիւանդին կազմուածքը՝ բնաւորութիւնը և ուրիշ պարագաներ։

[1] Hydrogène carboné.

ՀԱՆԵԼՈՒԿ

ՀԵՌՈՒԱՆՑ կուգայ կլոր փաթթոցիկ.
Իրաւ փաթթո՞ց է, ի՞նչ է.
Վըրան գըլուխն է խատուտիկ.
Քուրջի որդի՞ է ի՞նչ է.
Կարդալ չունի, գիր կը գըրէ,
Աս ի՞նչ տեսակ գրագիր է.
Տունն որ այրի՝ խաղ կը կանչէ,
Խենթ չէ կ'ըսես նէ ի՞նչ է։

ՄԱՑԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ՄԿՐԱՏ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ